ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ
ՀՐԱՄԱՆ

« 13 »   մայիս  2026թ.     No  2680 - Ա

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՈՒՄ ՍՏԱՑԱԾ ԹՎՈՎ 4 ԴԵՂԵՐԻ ԳՐԱՆՑՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Դեղերի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 29-րդ մասի 5-րդ կետը, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության  N 03/2398-26  առ 08.05.2026թ. գրությունը և հավելվածում նշված դեղերն արտադրող դեղագործական ընկերության գրությունները, համաձայն որոնց դեղերի արտադրությունը դադարեցվել է.

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ   Ե Մ՝

1. Հայաստանի Հանրապետության պետական գրանցում ստացած թվով 4 դեղերի՝ համաձայն հավելվածի, գրանցումը ուժը կորցրած ճանաչել:

2. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության աշխատակազմի հասարակության հետ կապերի բաժնի պետ Լ. Բաբախանյանին՝

ապահովել մասնագիտական և պաշտոնական զանգվածային լրատվության միջոցներում համապատասխան տեղեկատվության հրապարակումը:

3. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության գլխավոր քարտուղար Վ.Գրիգորյանին՝ սահմանված կարգով ապահովել սույն հրամանի տրամադրումը Առողջապահության և աշխատանքի տեսչական մարմնին, հայտատուին, դեղերի շրջանառության սուբյեկտներին:

4. «Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Ա. Բաղրյանին՝ սույն հրամանի հավելվածում նշված 4 դեղերը հանել գրանցամատյանից:

ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝                    Լ.ՆԱՆՈՒՇՅԱՆ

Recoverable Signature

X 

ԼԵՆԱ ՆԱՆՈՒՇՅԱՆ

Signed by: NANUSHYAN LENA 5114750164

Հավելված

Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի

2026 թվականի մայիսի « 13 » - ի N 2680- Ա հրաման

## ՀՀ-ում գրանցումը ուժը կորցրած ճանաչելու դեղերի ցանկ

| ՀՀ | Առևտրային անվանումը | Ակտիվ բաղադրատարրի համընդհանուր անվանումը | Դեղաձևը | Դեղաչափը և Փաթեթավորումը, թողարկման ձևը | Դեղի արտադրական գործընթացում ներգրավված բոլոր արտադրողները (անվանում, գտնվելու վայր) | երկիր | Դեղի պետական գրանցման հավաստագրի իրավատերը (անվանում, գտնվելու վայր) | երկիր | Բաց թողնման կարգավիճակը | եզրակացության համար և ամսաթիվ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | Տենոքս | ամլոդիպին (ամլոդիպինի մալեատ) | դեղահատեր | 5մգ; (30/3x10/) բլիստերում | ԿՌԿԱ դ.դ., Նովո մեստո, Սմարժեսկա փ. 6, 8501 Նովո Մեստո | Սլովենիա | ԿՌԿԱ դ.դ., Նովո մեստո, Սմարժեսկա փ. 6, 8501 Նովո Մեստո | Սլովենիա | Դ | 19683 07.05.2026 |
| 2 | Տենոքս | ամլոդիպին (ամլոդիպինի մալեատ) | դեղահատեր | 10մգ; (30/3x10/) բլիստերում | ԿՌԿԱ դ.դ., Նովո մեստո, Սմարժեսկա փ. 6, 8501 Նովո Մեստո | Սլովենիա | ԿՌԿԱ դ.դ., Նովո մեստո, Սմարժեսկա փ. 6, 8501 Նովո Մեստո | Սլովենիա | Դ | 19684 07.05.2026 |
| 3 | Սուլֆասալազին-ԵՆ | սուլֆասալազին | դեղահատեր աղելույծ | 500մգ; (50/5x10/) բլիստերում | ԿՌԿԱ դ.դ., Նովո մեստո, Սմարժեսկա փ. 6, 8501 Նովո Մեստո | Սլովենիա | ԿՌԿԱ դ.դ., Նովո մեստո, Սմարժեսկա փ. 6, 8501 Նովո Մեստո | Սլովենիա | Դ | 20091 07.05.2026 |
| 4 | Սուլֆասալազին-ԵՆ | սուլֆասալազին | դեղահատեր աղելույծ | 500մգ; (50/5x10/) բլիստերում | ԿՌԿԱ դ.դ., Նովո մեստո, Սմարժեսկա փ. 6, 8501 Նովո Մեստո- բացը արտադրող, որակի և բաց թողման հսկող, ԿՌԿԱ դ.դ., Նովո մեստո, Ռադա Պուսենյակա փ. 10, Լյուտոմեր, 9240, Սլովենիա- փաթեթավորող | Սլովենիա | ԿՌԿԱ դ.դ., Նովո մեստո, Սմարժեսկա փ. 6, 8501 Նովո Մեստո | Սլովենիա | Դ | 20286 07.05.2026 |